ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3982-Ա « 30 » սեպտեմբերի 2025թ.

ՀԱՂԹԱՆԱԿ ՏԵՂԱՄԱՍ ԹԻՎ 11-2 ԵՎ 11-2Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Վարդան Ղազարյանի լ/ա Արսեն Ղազարյանի դիմումը՝ Հաղթանակ տեղամաս թիվ 11-2 /վարելահող/ և 11-2ա /անօգտագործելի հող (իրացման ենթակա)/ հասցեներում գտնվող, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2024 թվականի սեպտեմբերի 24-ի հ.16221 վկայագրով Արսեն Ղազարյանին փոխանցված հողամասերի սահմանները ճշտելու և հատակագծեր թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի պետական հ.Ա003850 ակտը և ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.16221 և հ.16222 վկայագրերը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ տեղամաս թիվ 11-2 /վարելահող/ և 11-2ա /անօգտագործելի հող (իրացման ենթակա)/ հասցեներում գտնվող հողամասերի փաստացի չափագրությամբ մակերեսները կազմում են համապատասխանաբար՝ 1200.0քմ և 6000.0քմ, ինչպես որ ամրագրված է փաստաթղթերում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի հողամասերը գտնվում են 12-րդ գոտում /ծածկագիր՝ 01-007-0164-0005/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 135-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-51258-25 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Հաղթանակ տեղամաս թիվ 11-2 /վարելահող/ և 11-2ա /անօգտագործելի հող (իրացման ենթակա)/ հասցեներում գտնվող, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2024 թվականի սեպտեմբերի 24-ի հ.16221 վկայագրով Արսեն Ղազարյանին փոխանցված հողամասերի սահմանները որոշվում են համապատասխանաբար՝ 1200.0քմ և 6000.0քմ մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ